ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2023թ. **N -----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՕՀԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ Հ. 64 ՇԵՆՔԻ Հ. 9/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2023 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Օհանովի փողոցի հ.64 շենքի հ.9/1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Անժիկ Միրզայի Նորեկյանին, Վարդան Հրաչյայի Մամիկոնյանին և Սամվել Հրաչյայի Մամիկոնյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՕՀԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ Հ. 64 ՇԵՆՔԻ Հ. 9/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Օհանովի փողոց հ.64 շենքի հ.9/1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Անժիկ Միրզայի Նորեկյանին, Վարդան Հրաչյայի Մամիկոնյանին և Սամվել Հրաչյայի Մամիկոնյանին:

Օհանովի փողոցի հ.64 շենքի հ.9/1՝ 12,65 քմ մակերեսով բնակարանը, համաձայն գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 24.10.2011թ. հ.2711592 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Օհանովի փողոցի հ.64 շենքի հ.9 բնակարանը (նախկին հասցեն ՀԱԹ, Ա-3 թաղամաս, 46 շենք, բն.9) Ժողովրդական դեպուտատների Երևանի Շահումյանի շրջսովետի գործադիր կոմիտեի կողմից տրված 16.02.1983թ. հ.113809 օրդերի համաձայն՝ հատկացվել է Հրաչյա Հրանտի Մամիկոնյանին և վերջինիս ընտանիքին՝ կնոջը՝ Անժիկ Միրզայի Նորեկյանին, որդիներին՝ Վարդան Հրաչյայի Մամիկոնյանին և Սամվել Հրաչյայի Մամիկոնյանին:

Ընտանեկան անախորժությունների պատճառով Անժիկ Նորեկյանը դիմել է դատարան՝ խնդրելով իրեն և իր երեխաներին ընդհանուր բնակարանից հատկացնելու առանձին բնակարանային տարածք: Շահումյանի շրջանային Ժող.դատարանի 10.04.1984թ. հ.2-759 վճռով վերոնշյալ բնակարանի երկու սենյակները հատկացվել են Անժիկ Նորեկյանին իր երկու երեխաների հետ միասին բնակվելու համար, իսկ մեկ սենյակը հատկացվել է Հրաչյա Մամիկոնյանին մեկ անձով բնակվելու համար, կոմունալ և օժանդակ հարմարությունները թողնվել է կողմերին համատեղ օգտագործելու համար:

25.11.1987թ. ամուսինները ամուսնալուծվել են:

27.08.2007թ.-ին Անժիկ Նորեկյանը սեփականացրել է ընդհանուր բնակարանի երկու սենյակները, իսկ Հրաչյա Մամիկոնյանի չսեփականաշնորհված մեկ սենյակը դարձել է Երևան համայնքի սեփականությունը և քաղաքապետի 25.05.2011թ. հ.2119-Ա որոշմամբ տրվել է նոր հասցե՝ Օհանովի 64 շենք բն. 9/1:

Ըստ «Գավառ» համատիրության կողմից տրված արձանագրության՝ Հրաչյա Մամիկոնյանը 1987թ.-ից մինչև իր մահը՝ 2022թ. չի բնակվել իրեն հատկացված սենյակում: Վերջինս հաճախակի գտնվել է ՀՀ տարածքից դուրս: Նույն արձանագրությամբ և տեղեկանքի համաձայն Անժիկ Նորեկյանը իր երկու որդիների հետ 1983թ. առ այսօր բնակվում և տիրապետում են Օհանովի փողոց 64 շենքի բն. 9, այդ թվում նաև 9/1-ը, որը տիրապետվել է Հրաչյա Մամիկոնյանի համաձայնությամբ և

թույլտվությամբ: Մասնավորապես այդ սենյակը տիրապետում է Հրաչյա Մամիկոնյանի կրտսեր որդին՝ Սամվել Մամիկոնյանը, որը երկրորդ կարգի հաշմանդամ է և ունի առողջական խնդիրներ:

Ըստ անձնագրերի և վիզաների վարչության Մալաթիայի բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկանքի, Անժիկ Նորեկյանը (1983թ.), Վարդան Մամիկոնյանը (2000թ.) և Սամվել Մամիկոնյանը (2005թ.) հաշվառված են Օհանովի փողոց հ. 64 շենք հ. 9 բնակարանի հասցեում: Նույն բնակարանում հաշվառված են նաև Վարդան Մամիկոնյանի ընտանիքի անդամները:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացիներ Անժիկ Նորեկյանի, Վարդան Մամիկոնյանի և Սամվել Մամիկոնյանի անվամբ ք. Երևան Օհանովի 64 շենքի բն. 9 հասցեի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք, իսկ վերջին հինգ տարիների ընթացքում վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում կնքված անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 694-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 694-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՕՀԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ Հ. 64 ՇԵՆՔԻ Հ. 9/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Օհանովի փողոց հ. 64 շենքի հ. 9/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԵՐԱՄԻ ՓՈՂՈՑ Հ.64 ՇԵՆՔԻ Հ. 9/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Օհանովի փողոց հ.64 շենքի հ.9/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ